

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

6 հուլիսի 2017 թվականի N 773-Ն

### ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 394-րդ հոդվածի 8-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Սահմանել ապրանքների դրոշմավորման կանոնները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

**Հայաստանի Հանրապետության**

**վարչապետ**

**Կ. Կարապետյան**

2017 թ. հուլիսի 7

Երևան

**Հավելված**

**ՀՀ կառավարության 2017 թվականի  
հուլիսի 6-ի N 773-Ն որոշման**

**Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր**

**ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ**

1. Սույն կանոններով կարգավորվում են ապրանքների դրոշմավորման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կանոններին համապատասխան՝

1) ակցիզային դրոշմանիշերով (այսուհետ՝ դրոշմանիշ) դրոշմավորման ենթակա են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 389-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ապրանքները.

2) դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա են օրենսգրքի 390-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ապրանքները:

3. Օրենսգրքին համապատասխան՝ ապրանքների դրոշմավորման պարտավորություն կրող անձինք ապրանքները դրոշմավորում են ինքնուրույն՝ համապատասխանաբար իրենց հաշվառման վայրի հարկային տեսչությունից կամ հաշվառման մաքսատնից ձեռք բերված դրոշմանիշերը (դրոշմապիտակները) այդ ապրանքների վրա փակցնելու միջոցով:

4. Ապրանքների վրա փակցված դրոշմանիշերը (դրոշմապիտակները) պետք է համապատասխանեն հարկային և մաքսային մարմնի կողմից սահմանված տեխնիկական պահանջներին, ինչպես նաև պետք է լինեն չվնասված, ամբողջական և դրոշմավորված ապրանքի տեսակին, ենթատեսակին (նկարագրին),

տարողությանը (ծավալին, քաշին կամ տվյալ ապրանքատեսակին բնորոշ չափման այլ միավորին) համապատասխանող:

5. Դրոշմանիշը (դրոշմապիտակը) պետք է փակցված լինի ապրանքի (տարայի) վրա առավել տեսանելի տեղում՝ վերին կամ կողային մակերեսներին, այդ թվում՝ պիտակի վրա:

6. Դրոշմանիշը (դրոշմապիտակը) պետք է փակցված լինի այնպես, որպեսզի ապահովվի ապրանքի անվանման, հայերեն մակնշման և պիտանիության ժամկետի վերաբերյալ նշումների ընթեռնելիությունը:

7. Արգելվում է հաստատված նմուշի դրոշմանիշի (դրոշմապիտակի) վրա կատարել նշագրումներ (կնիքներով, դրոշմակնիքներով կամ այլ կերպ), դրոշմանիշերը (դրոշմապիտակները) կամ դրանց մի մասը ծածկել անթափանց թաղանթներով: Անթափանց թաղանթով ամբողջովին կամ մասնակիորեն ծածկված (դրոշմանիշի սերիան, համարը և այլ պաշտպանիչ տարրեր պարունակող մասերը) դրոշմանիշերով (դրոշմապիտակներով) դրոշմավորված ապրանքների իրացումը համարվում է չդրոշմավորված ապրանքների իրացում:

8. Վնասված, ոչ ամբողջական և (կամ) դրոշմավորման ենթակա ապրանքի տեսակին, ենթատեսակին (նկարագրին), տարողությանը (ծավալին, քաշին կամ տվյալ ապրանքատեսակին բնորոշ չափման այլ միավորին) չհամապատասխանող դրոշմանիշերով (դրոշմապիտակներով) ապրանքներ իրացնելը, ինչպես նաև սույն կանոնների 5-րդ կետով սահմանված պայմանները չապահովելը համարվում են դրոշմավորման կանոնների խախտում:

9. Սույն կանոնների 4-րդ և 8-րդ կետերով սահմանված՝ ապրանքների տարողությանը վերաբերող պահանջները ԱՏԳ ԱԱ 3304, 3305, 3401 և 3402 ծածկագրերին դասվող ապրանքների համար կիրառելի չեն:

10. Դրոշմանիշերով (դրոշմապիտակներով) դրոշմավորված ապրանքների արտահանման դեպքում օրենսգրքով սահմանված կարգով դրոշմավորման

պարտավորություն կրող անձանց կողմից ներկայացվող ապրանքների մաքսային հայտարարագրում (Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ արտահանելու դեպքում՝ տարանցման մաքսային հայտարարագրում) նշվում են դրոշմանիշերի (դրոշմապիտակների) թիվը, սերիաները, հերթական համարները (այդ թվում՝ միջակայքերով) և դրանց ստացման հաշիվ-վավերագրի համարն ու ամսաթիվը:

11. Արտահանված ապրանքների դրոշմանիշերի (դրոշմապիտակների) հաշվառման իմաստով դրոշմավորված ապրանքները համարվում են արտահանված՝ ապրանքների մաքսային հայտարարագրում (տարանցման մաքսային հայտարարագրում) և ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների օգտագործման մասին հաշվետվության մեջ նշված ապրանքների քանակներից նվազագույնի չափով: